օրից յետոյ բարձրանում է երեսը՝ պատրաստի ներկը համարում են հասած» ։

«Կապոյտ գոյնի ներկելիս սպիտակ կանձերը ձգում են վերոյիշեալ բաղադրութեան մէջ եւ 10–12 ժամ թողնում, ապա հանում, լուանում եւ չորացնում» ։

«Բաց կապոյտ կամ երկնագոյն ներկելիս կանձերը դլուզիկի մէջ թողնում են միայն 1/2 – 1 ժամ, մուգ կապոյտ ներկելիս՝ 2–3 ժամ, մուգ կապոյտ (լաճվարդ) 8–12 ժամ»([43]) ։

ԿԱՆԱՆՉ

Ստեփանոս Սիւնեցի իր Գերականին մէջ կանանչին կու տայ «դալ» հոմանիշը ։

Շատախի մէջ «Կանաչ գոյն ներկելիս՝ նախ ներկում են դեղնագոյն եւ ապա ձգում դլուզի մէջ, թողնելով 1–2 ժամ, նայած թէ ինչ մթութեան երփն են կամենում տալ ։ Սա եւս սառը ջրով լուանում են եւ ապա չորացնում»([44]) ։ *Իսկ Բուլանըխի մէջ «Կանանչ գոյն ունենալու համար դեղին մանածը պէտք է թաթախել լեղակի ներկի մէջ»* ։

ՍԵՒ ԹՈԽ

Շատախի մէջ երբ ուզեն սեւ-գոյն ստանալ՝ կանանչը կը ներկեն սեւի հետեւեալ եղանակով ․ «Ամէն մի նուկի կանձի համար վերցնում են 40 դրամ կանաչ արջասպ (պաճ, սուլֆաղ որ ֆէր), ձգում ջրով լի մի կաթսայի մէջ, եռացնում եւ վերոյիշեալ սրճագոյն կանձերը ձգում սրա մէջ, մէկ, մէկ ու կէս ժամ եռացնում, հանում, լուանում եւ չորացնում ։ Այսպիսով ստացւում է սեւ գոյն»([45]) ։ *Իսկ Բուլանըխի մէջ «Թուխ գոյն ստանալու համար հարկաւոր է բռնել* բօրօղայ, *այսինքն ամանի մէջ ածել* մէզ (*մարդու կամ կնոջ*), *երկաթի կտորներ եւ* չըլըխ *կոչուած ներկի խոտը, եւ մի քանի օր ջրով պահելուց յետոյ, մանածը դնել մէջը որոշ օրերով»*([46]) ։ *Իսկ դարձեալ ի Շատախ սեւ ներկելու համար ամէն մի նուկի կանձի համար 2 նուկի ընկուզենու արմատի կեղեւ մանր բրդում են եւ լցնում սառն ջրի մէջ ու այսպէս թողնում 2–3 օր ․ ապա եռացնում են ու կանձերը լցնում են մէջը ։ Երբ 1/2 – 1 ժամ եռացնում, ստացւում է բաց չա–*

([43]) *Ազգ․ Հանդ․* 1913, *թիւ* 2, *էջ* 194 ։
([44]) *Անդ*, *էջ* 194–5 ։
([45]) *Անդ*, *էջ* 195 ։
([46]) *Անդ*, 1899, *թիւ* 1, *էջ* 69 ։